ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

В. Аветисян Сурен Спандарян (Тимофей)

Ереван, Армгиз. 1945 г. 139 стр.

Սուրեն Սպանդարի Սպանդարյանը (պարտիական ծածկանունը՝ Տիմոֆեյ) պատկանում էր բոլշևիկյան պարտիայի պրոֆեսիոնալ ռևոլուցիոներների թվին, որոնց աշխատանքին այնքան կարևոր նշանակություն էին տալիս պարտիայի հիմնադիրներ Լենինը և Ստալինը։ Լենինը իր հռչակավոր «Ի՞նչ անել» աշխատությունում խոսելով ցարական Ռուսաստանի պայմաններում ռևոլուցիոն-մարքսիստական պարտիայի ստեղծման մասին՝ պրոֆեսիոնալ ռևոլուցիոներների առկայությունը նրան պարտիայի կազմակերպման անհրաժեշտ պայմաններից մեկն էր համարում։

«Ես պնդում եմ,— գրում է Լենինը,— (1) որ ոչ մի ռևոլուցիոն շարժում չի կարող կայուն լինել առանց ղեկավարների կայուն և հաջորդականությունը պահպանող կազմակերպության. (2) որ, որքան ավելի լայն է կրվի մեջ տարերայնորեն քաշվող շարժման հիմքը կազմող և նրան մասնակցող մասսան, այնքան ավելի դրամայական է այդպիսի կազմակերպության անհրաժեշտությունը և այնքան ավելի ամուր պետք է լինի այդ կազմակերպությունը... (3) որ այդպիսի կազմակերպությունը պետք է բաղկացած լինի գլխավորապես այնպիսի մարդկանցից, որոնք պրոֆեսիոնալ կերպով պարապում են ռևոլուցիոն գործունեությամբ. (4) որ ինքնակալական երկրում որքան ավելի եղեցնենք այդպիսի կազմակերպության անդամների կազմը, այն աստիճանի, որ նրան մասնակցեն այնպիսի անգամներ միայն, որոնք պրոֆեսիոնալ կերպով պարապում են ռևոլուցիոն գործունեությամբ և ստացել են պրոֆեսիոնալ պատրաստություն քաղաքական ոստիկանության դեմ մղվող պայքարի արվեստում, այնքան ավելի դժվար կլինի այդպիսի կազմակերպությունը «որսալ»...[1] *Սուրեն Սպանդարյանը լենինյան-ստալինյան այդ փառահեղ գվարդիայի խոշորագույն ներկայացուցիչն էր։*

Դեռ դպրոցական նստարանի վրա նա ծանոթանում է մարքսիզմի կլասիկների, Լենինի, ինչպես և Պլեխանովի աշխատությունների հետ, որոնց ազդեցության տակ ձևակերպվում է նրա աշխարհայացքը։ Կապիտալիզմի շղթաներից մարդկությունը ազատելու, նրան զեպի լուսավոր և երջանիկ կյանք տանելու համար նա մի ելք է տեսնում, դա—պրոլետարական ռևոլուցիայի հաղթանակի, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման ուղին է, այն ուղին, որը ցույց էր տալիս ռևոլուցիոն մարքսիզմի ուսմունքը։

1898—1900 թ. թ. ընկեր Ստալինի գլխավորությամբ ստեղծվում և

---

1 Վ. Ի. Լենին—Ի՞նչ անել։ Պետհրատ, Երևան, 1938 թ., էջ 168—169։

ձևավորվում է Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատիայի լենինյան թևը։ Այդ տարիներին կազմակերպված Թբիլիսիի կազմակերպության ղեկավար կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը ընկեր Ստալինի ղեկավարությամբ խոշոր կազմակերպական և ռևոլյուցիոն-պրոպագանդիստական աշխատանք է ծավալում անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու համար։ Միաժամանակ խումբը ղեկավարում է նաև Թբիլիսիի պրոլետարիատի քաղաքական կյանքը, նրա գործադուլները և ցույցերը։ Փոթորկվել սկսող Անդրկովկասի քաղաքական կյանքի մոտով չէր կարող անցնել Սուրեն Սպանդարյանը, նա չէր կարող զարգացող դեպքերի լոկ ականատեսը լինել։ Եվ ահա մենք տեսնում ենք, որ 1902 թ., գիմնազիան ավարտելու տարին, նա արդեն անդամ է ընկեր Ստալինի կողմից հիմնադրված ՌՍԴԲՊ Թբիլիսիի կազմակերպության և որպես այդպիսին ակտիվ աշխատանք է տանում նրա շարքերում։ Ծանոթությունը ընկեր Ստալինի հետ վճռական նշանակություն է ունենում Ս. Սպանդարյանի կյանքում։ Նա դառնում է բոլշևիկ և պարտիայի շարքերը մտնելու առաջին օրից մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում նրան։ Նա ապրեց, աշխատեց և իր կյանքը տվեց Լենինի—Ստալինի մեծ գործին։

Հարուստ և բազմակողմանի էր Ս. Սպանդարյանի կյանքը և գործունեությունը։ Մենք նրան տեսնում ենք զենքը ձեռքին կռվելիս բարիկադների վրա 1905 թ. Մոսկվայում. ճանաչում ենք որպես խոշոր և հռետորուն կազմակերպչի, որպես տաղանդավոր պրոպագանդիստի ու կրակոտ ագիտատորի, որպես փայլուն հրապարակախոսի։ Նա այնտեղ էր, ուր կարիք կար հաղթահարելու դժվարությունները, կարգավորելու պարտիական աշխատանքները։ Նրան ճանաչում, հարգում և սիրում էին Մոսկվայի, Պետերբուրգի (այժմ Լենինգրադ) Թբիլիսիի, Բաքվի նավթահորերի բանվորները, Ալահվերդու հանքագործները և Անդրկովկասի ուրիշ վայրերի աշխատավորները։

Բոլշևիկին հատուկ է սկզբունքայնությունը։ Այդպիսին էր Ս. Սպանդարյանը։ Ով դեմ էր ռևոլյուցիոն մարքսիզմի ուսմունքին, Լենինի—Ստալինի մեծ գործին, նա Ս. Սպանդարյանի թշնամին էր։ Ոչ ոքի նա չէր խնայում՝ սկսած իր հորից, որը հայկական պահպանողական «Նոր-Դար» թերթի խմբագիրն էր, վերջացրած մենշևիկներով, դաշնակցականներով էսերներով, սպեցիֆիկներով, որոնց նա օրգանապես չէր կարողանում տանել։ Նրա բոլոր հոդվածները, ելույթները հագեցված էին բոլշևիկյան սկզբունքայնությամբ, և հենց այդ պատճառով աշխատավորները Ս. Սպանդարյանի հոդվածները կարդում էին մեծ հետաքրքրությամբ և նրան լսում մեծ ուշադրությամբ։ Հենց այդ պատճառով բանվոր դասակարգի, ռևոլյուցիայի թշնամիներն ատում էին նրան։

Լավ ճանաչելով Ս. Սպանդարյանին, ընկեր Ստալինը նրան ներգրավում է պարտիական պատասխանատու աշխատանքի։ 1905 թ. երկրորդ կեսից նա անդամ է ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի, որը գլխավորում էր ընկեր Ստալինը։ 1906 թ. օգոստոսին նա որպես ՌՍԴԲՊ Կովկասյան Մարզային Բյուրոյի ներկայացուցիչ դնում է Ալավերդի ղեկավարելու բանվորների գործադուլը, որը ճնշվում է ցարական զորքերի կողմից։ Նույն թվին նա լինում է Գանձակում, ուր կարգավորում է պարտիական աշխատանքը։ 1907 թ. նա ընկեր Ստալինի առաջարկությամբ

մեկնում է Բաքու պարտիական աշխատանք տանելու, ուր և աշխատում է մինչև 1909 թ. դեկտեմբեր ամիսը, երբ ձերբակալվում է և երեք ամիս բանտ նստելուց հետո արտաքսվում Բաքվի նահանգից։ 1910 թ. Ս. Սպանդարյանը Թբիլիսուն է ու կրկին պարտիական աշխատանքում։ Թբիլիսիում և Բաքվում աշխատելիս նա Ստեփան Շահումյանի հետ միասին խմբագրել է մի շարք հայերեն բոլշևիկյան թերթեր -«Կայծ», «Նոր Խոսք» և «Օրերը»։ Եղել է Բաքվի բոլշևիկյան „Бакинский пролетарий" և „Бакинский рабочий" թերթերի խմբագրական կոլեգիայի անդամ։ Բաքվից արտաքսվելուց հետո նա Թբիլիսիում ղեկավարել է ռուսերեն լեզվով լույս տեսնող մի շարք թերթեր, որոնք նա ամբիոն էր դարձրել բոլշևիկյան խոսքը մասսաներին հասցնելու համար։ Աշխատելով Անդրկովկասում, Ս. Սպանդարյանը լավ ծանոթ էր նրա իրադարձությունների հետ և իր հոդվածներում արձագանքում էր բոլոր աչքի ընկնող քաղաքական դեպքերին։ Նա լավ ծանոթ էր և հայկական իրականության հետ։ Հայ աշխատավորներին նա պայքարի էր հանում հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, հատկապես դաշնակցականների դեմ և հայ աշխատավորներին հրավիրում կանգնել ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ։

Սակայն Ս. Սպանդարյանի հասարակական-քաղաքական գործունեությունը չէր սահմանափակվում միայն Անդրկովկասով։ Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտն ու գինակիցը շուտով դարձավ ՌՍԴ բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչներից մեկը։ 1912 թ. նա մասնակցում է Համառուսական վեցերորդ (Պրագայի) կոնֆերանսին, որի նախապատրաստման գործում եռուն մասնակցություն է ունենում։ Նա անդամ էր կոնֆերանսը նախապատրաստող Ռուսաստանյան Կազմակերպական հանձնաժողովի, որի հանձնարարությամբ մեկնում է Մոսկվա, Պետերբուրգ և Մերձբալթյան երկրները պայքար կազմակերպելու կոնֆերանսի գումարման համար։ Լենինը հավանություն տվեց նրա աշխատանքներին։ Կոնֆերանսում Ս. Սպանդարյանը զեկուցեց Բաքվի, Թբիլիսիի, Բաթումի, Սուխումի, Քութայիսի, Փոթիի և Գորիի պարտիական կազմակերպությունների դրության մասին և ընտրվեց բոլշևիկյան պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և վերջինի Ռուսական Բյուրոյի անդամ։ Կոնֆերանսից հետո Սպանդարյանը Ռիգայում, Պետերբուրգում, Մոսկվայում, Բաքվում և Թբիլիսիում զեկուցումներ է տալիս կոնֆերանսի աշխատանքների մասին, մասսայականացնում է նրա որոշումները և պայքար կազմակերպում նրանց կենսագործման համար։

1912 թ. մարտին Բաքվում ոստիկանությունը ձերբակալում է Ս. Սպանդարյանին։ 1913 թ. ապրիլին Թբիլիսիի դատաստանական հատուկ ատյանի որոշմամբ նա դատապարտվում է յոթ աքսորի հեռավոր Սիբիրում։ Տեղ հասնելուց հետո Ենիսեյսկի նահանգապետի կարգադրությամբ նրան ուղարկում են նահանգի ամենախուլ անկյուններից մեկը՝ Ինոկենտիևսկոյե գյուղը մշտապես ապրելու համար։

1914 թ. Սիբիրում՝ աքսորում էին գտնվում ընկերներ Ստալինը, Սվերդլովը, Օրջոնիկիձեն։ Պարտիան միջոցներ էր ձեռնարկում կազմակերպելու ինչպես նրանց, այնպես և Ս. Սպանդարյանի փախուստը։ Ցարական ոստիկանությունը պրովոկատորների միջոցով իմանում է այդ մասին և կարգադրում Ենիսեյսկի նահանգական ժանդարմական վարչության պետին

ձեռք առնել իրատ միջոցներ՝ կանխելու փախուստը։ 1914 թ. հուլիսին Սպանդարյանին աքսորում են ավելի հյուսիս՝ Տուրուխանյան երկրի Մոնաստիրսկոյի գյուղը։ Նույն երկրի Կուրեյկա գյուղումն էր գտնվում այդ ժամանակ և ընկեր Ստալինը։ Կուրեյկան Մոնաստիրսկոյից 175 վերստ հեռավորության վրա էր գտնվում։ Ս. Սպանդարյանը կապվում է ընկեր Ստալինի հետ և նրա հանձնարարությամբ հոռն պարտիական աշխատանք է ծավալում աքսորում գտնվող բոլշևիկների մեջ։ Ընկեր Ստալինը և Ս. Սպանդարյանը Սիբիրից կապ էին պահպանում Լենինի հետ և ստանում վերջինից անհրաժեշտ տեղեկություններ և հրահանգներ։

Աքսորավայրի դաժան պայմանների հետևանքով Ա. Սպանդարյանը ծանր հիվանդանում է, և 1916 թ. սեպտեմբերի 11-ին Կրասնոյարսկի քաղաքային հիվանդանոցում դադարում է բարախելուց բոցաշունչ բոլշևիկի, հայ ժողովրդի լավագույն զավակի սիրտը։

Ս. Սպանդարյանի մահը ծանր կորուստ էր պարտիայի համար։ Իր հավատարիմ գինակցի մահը ծանր վիշտ պատճառեց ընկեր Սաալինին։ «Սուրենին մենք չենք մոռանա. մի վհատվեք», «Աշխատեցեք ռևոլուցիայի համար այնպես, ինչպես աշխատում էր Սուրենը»,—գրում էր ընկեր Ստալինը Ս. Սպանդարյանի մահվան առթիվ։

Ընկեր Ավետիսյանը առաջին լուրջ քայլն է կատարում տալու Սուրեն Սպանդարյանի կյանքը և գործունեությունը։ Այդ տեսակետից ողջունելի է նրա նախաձեռնությունը։ Հեղինակին ընդհանուր առմամբ հաջողվել է պատկերել վառվուն ռևոլուցիոնների անմոռանալի կերպարը։ Գիրքը կկարդացվի ամենայն հետաքրքրությամբ։

Հ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ